45. ՏՂՈՒ ԷՐԱՋ

Կէղնի, չէղնի տղեմ ու պապ կէղնի։ Տղեն կիշեր կքնի երազ կտեսնա։ Գելնա սաբահտան կըսե.

— Պապ, ես էրազ տեսա։

Պապ կըսե.— Աստված խերն էնե,— կըսե,— դե էրազդ պատմե։

Տղեն կըսե.— Մոռցա։

Պապ օր կտեսնա տղեն էրազ[1] չպատմի, տնեն դուս կէնե։

Տղեն հ'ոցքի գելնա կէրթա ռեսի տուն։ Ռես կըսե.

— Տղա, հ'որի՞ էկար։

Կըսե.— Իմ պապ ընձի ծեծեց, դուրս էրեց։

Ռես հարցուց տղուց.— Հ'որի՞ ծեծեց ու դուրս էրեց։

Կըսե.— Ես էրազ մե տեսա կիշեր, պապս ըսավ թե պատմե զէս էրազ, ես իմ էրազ իմ պապուն չպատմեցի, ընձի ծեծեց ու դուրս էրեց։

Ռես ըսավ.— Ընձի պատմե։

Ռեսն էլ չըսավ՝ «Աստված խերն էնե». իդոտկուն տղեն չպատմեց. ռես լէ զտղեն ծեծեց, գեղեն դուրս էրեց։

Գեղից դուրս էլավ տղեն։ Միավոր մե էկավ հասավ ուրին, ըսավ.

— Այ տղա, ո՞ւր կէրթաս։

Ըսավ թե.— Ես էրազ մե տեսեր եմ, չպատմեցի իմ պապուն,

---

1 Բն. հեքիաթ (Ծ. Կ.)։

իմ պապ լէ ընձի ծեծեց։ Գնացի ռեսի խեչ. ռես լէ հարցուց. «Այ տղա, հ'որի՞ն էկարդ, ես լէ ըսի՝ «էրաղ մե տեսա, իմ պապուն չպատմեցի, պապ ծեծեց ընձի, դուրս էրեց». ռես լէ ընձի ծեծեց ու գեղից դուրս էրեց։

Սիավորն ըսավ.— Դե ընձի պատմե ղէտ քու էրազ։

Ըսեց.— Ընձի թալ քու ծիու վրեն, տար էն գեղ, էրազս քըզի պատմիմ։

Սիավոր թալեց ուր ծիու վրեն, առավ գնաց հասավ էն գեղ։ Ծիու վրավեն իջան։ Սիավորն ըսեց.

— Տղա՛, էրազդ պատմե ընձի։ — Ըսեց թե՝ «Աստված խեր էնեա»։

Տղեն էլ ըսեց.— Վա՛յ, մոռցա։

Սիավոր տղին ծեծեց ու գեղեն դուրս էրեց։

Տղեն հ'ոցքի էլավ գնաց քաղաք մե։ Էտմալ մարթու մե ռաստ էկավ, ըսավ.

— Այ տղա, ի՞նչ կզվռնիս։

Ըսեց.— Ես էրազ մե տեսա, իմ պապուն չպատմեցի. ընձի ծեծեց, տնից դուրս էրեց, ես լէ էկեր իմ իդա տեղրան կզվռնիմ։

Ըսեց.— Ինչի՞ համար էդ տեղրանք կզվռնիս, արի քու էրազն ընձի պատմե. հմա չըսավ՝ «Աստված խերն էնեա»։

Տղեն ըսավ. —Մոռցա։

Իդոտկուն տղին առին տարան թալին հոր մե։ Էդ հորուց օրական հաց մե կթալին տղին։ Տղեն լէ խեղճ, ժամանակ մե կմնա, ճար չկա հ'ելնալու օր թը հ'ելնա։ Էդ հոր մութն էր, ափըլթփելով օսկոր մե գընկնա ծեռ։ Ուրին կպռճկե հող։ Քիչ կպռճկե, շատ կպռճկե, տեսնա օր լուս մե կէրևա։ Կիշկե էդ բացած ծըկից կտեսնա օր հանդե հ'օդե մե կա։ Կմնա չըր իրիկուն։ Ծակ լենցուց ուր ջանդկի գորա, օրթը ինք հ'ընցնա հ'օդի մեջ։ Հ'ընցավ հ'օդի մեջ։ Տեսավ օր մարթ մե հանդե քնուկ է հ'օդի մեջ. կուշտ ու բոլոր իշկեց օրթը ֆանար մե դրուկ էր գլխու վերև, մեկ լէ օտներու տակ։ Էլ օր կուշտ ու բոլոր ֆըքրավ, տեսավ օր փանշարեն հաց ու զատ պատրաստ դրուկ էր։ Կերավ զհացն ու զատ (կերակուր), փոխեց զֆանարներ, գլխու վերևին դրեց օտներու տակ, օտներու տակին դրեց գլխու վերև, բացեց էդ պառկած մարթու էրես, տեսավ օր խուռնիկ-խրեղեն ախչիկ մե։ Կզավ պաքմ առավ էրեսեն ու էդ ծկով հ'ընցավ ու գնաց էլի ուրին հորի մեջ։

Սաբախտան ախչիկ էլավ, տեսավ օր ուր ֆանարներ փո-

խուկ էր, էլավ մտիկ տվեց հացին, տեսավ օր հացն ու զատ լէ կերուկ էր. ախչիկ հայլու հ'առեճ ուր էրես իշկեց օր լաքա կար ուր էրես, ըսեց. «Ըդ ի՞նչ բան է օր իմ էրես լաքա կա, իմ ֆանար լէ փոխած ին, իմ կերակուր լէ կերած ին». էտի ուր հ'առճևի ջառեսթաներու վրեն թալեց. ինք ախչիկ ու հ'առճևի շառեք լէ ախչիկ, էդ իմա՞լ կէղնի։ Մնաց չըմ իրիկուն. պառկան ու քնան։ Ջառեք էլի էփեցին ուր զատն ու հաց, բերին դրին էլի փանջարեն ու թողին դացին։

Կիշեր էլի տղեն էկավ, ֆանարներ էլի փոխեց, ու զհաց ու զատ կերավ, ու էկավ օր էլի ախչկա էրես բացեց ու պաքեց։ Էդ ծկով հ'ընցավ ու գնաց հորի մեջ։

Ախչիկ սաբախտան էլավ տեսավ ուր ֆանարներ փոխուկ էր, տեսավ ուր հաց լէ կերուկ էր, առավ հայլին ֆըքրավ, տեսավ օր էլի լաքա կա ուր էրես։ Ըսեց. «Ո՞րն է օր իմ հ'օդի մեջ գիգա, ու էդմլա կէնեա»։ Ընկավ մտածումի մեջ, մնաց չըր իրիկուն. ըսավ. «Իսա գիշեր ես պտի չքնիմ, հ'իշար մնամ, սանք հլա էդի ո՞րն է գիգա իմ հ'օդի մեջ կուտե զիմ հացն ու եմադ, կփոխե զիմ ֆանարներ, կպաքե ընձի ու կէրթա»։

Էդ գիշեր ինք հ'իշար կմնա. ու գիշեր տեսնա օր հ'օդի մեկ դըհից տղա մե գելնա, գիգա տղեն, կուտե զհաց, կփոխե զֆանարներ ու կկզի օր թը պաքնի ղախչկա էրես, ախչիկ տզի թև կբռնե։ Ախչիկ տեխի մեջեն գելնա, էդ տզի հետ կզրուցա, կըսե.

— Այ տղա, դուն ի՞նչ մարթ իս։

Կըսե.— Ըընչբար մարթ իմ։

Կըսե.— Իդա տեխ, անուն որձ մարթ չգտվի, դու հ'որի՞ գտվար։

Կըսե.— Է՞, իշթա աստծուց էր։

— Ախըր, ըսե, զօղորթն ընձիկ։

Տղեն ըսավ.— Ես էրազ մե տեսա, իմ պապուն չպատմեցի, իմ պապ ընձի ծեծեց, գեղից դուրս էրեց, էկա ես քաղաք. էդ քաղաք լէ մե մարթու ռաստ էկա, էդ մարթ լէ ըսեց. «Տղա դու ի՞նչ ըդատեղրանք կզվռնիս». ես ուրին ըսի. «Ես էրազ մե տեսա, իմ պապուն չըսի, էն լէ ընձի ծեծեց ու դեղից դուրս էրեց»։

Իդոտկուն մարթ ըսեց. «Զէդ էրազ ընձի պատմե». չըսեց թե՝ «Աստված խերն էնե», ես լէ չպատմեցի, ըսի՝ մոռցա։ Իդոտկուն ընձի բռնեց բերեց իդա հորու մեջ թալեց։ Ես ժամանակ մե, էդ հորի մեջ մանցի. հորու մեջ մութն էր, ափըլթփեցի ոսկոր մե ծեռսի ընկավ, հորի մեկ կողմ փորեցի, շատ փորեցի, քիչ փորե-

ցի, տեսա օր մե լուս էրևաց. էդ ծակ լենցուցի, մութ տվեց, հ'ընցա էսա հ'օդի մեջ ու քըզի ռաստ էկա։

Ախչիկ կըսե.— Քու էրազդ ընձիկ պատմե։

Տղեն չպատմե, հ'որի՞ օր, ախչիկ չըսեց թե՝ «Աստված խերն էնե»։

Ախչկա սիրտ ու տղին զիրարու բռնեց։ Տղեն գիշեր կէրթա ախչկա մոտ կքնի, իսկ ցերեկ կէրթա էլի հորի մեջ կքնի։ Իդոտկուն էդ ախչիկ ուր ջառեսթաններուն կըսե թե.

— Իմ եմագ հ'որի քիչ կբերիք։

Ջառևքն էլ՝ ուր զատ մեկ աման էր, կէնին էրկու աման։

Ժամանակ մե, տղեն ու ախչիկ իրարու մոտ կմնան։

Իդոտկուն ուրիշ էրկրի թագավոր մե, էդ ախչկա հոր օր թագավոր էր, մըրթալ մե կճամփե, ու կըսե. «Թե էդ մըրթալ ծակեցիր, ես իմ ախչիկ քու տղին գիտամ, թե օր չծակեցիր, դու քու ախչիկ իմ տղին պտի տաս»։

Թագավոր քոմեց ուր վազիրներ, թե. «Արեք, հա մյուս թագավոր մըզի մե մըրթալ ճամբե, տեսնանք, թը իմա՞լ կըրանք ծակինք»։ Ինչպես կէնին, էդ մըրթալին ծակող չկա։

Ախչիկ դիմնա, ուր հ'առջևու ջառին կըսե.

— Էդ մըրթալ գողտուկ ընձի ըի։

Ջառեն մըրթալ կբերե ախչկան գիտա։ Ախչիկ գիտա տղի մոտ։ Տղեն լէ հմալ կծակե օր կէնե սառատի նման։ Ու ախչիկ էլի գիտա ջառին, կըսե.

— Դու գողտու դիր օդի։

Սաբախտան թագավոր գելնա կտեսնա օր մըրթալ ծակուկ է սառատի նման, գելնան կճամփին, էլի զէդ ճամփող թագավորի մոտ։

Օլոր օր թագավոր էլման գելնա փետ մե կճամփե, էդ փետի էրկու գլուխ լէ մեկ է, հաստ ու բարակ չկա, էդ փետ կճամփե էդ թագավորի մոտ կըսե թե. «Էս փետին հաստ գլոխ որ մեկն է, կամ բարակ գլոխ որ մեկն է, հանեք ու ընձի ճամփեք»։

Սաբախտան թագավոր գելնա, մեկ լէ կքոմե զուր վազիրներ, կըսե թը.

— Առեք, տեսնանք էդա փետին հաստ գլոխ ո՞ր մեկն է, կամ թե բարակ։

Ինչ կէնին, չէնին, չկրնան հանին։

Թագավորի ախչիկ էլման կլսե, տղին կըսե, տղեն լէ կըսե թը.

— Թրխ էրթան փեթ թալին ճրի մեջ, փետին որ մեկ գլոխ օր ճրի մեջ սրկավ, էն գլոխ հաստ գլոխն է։

Սաբախտան գելնան ու փետ կճամփին էրթա։

Էն թագավոր գելնա գորիս իրեք հատ ծի կճամփե, մեկ մեկից չճոկվի, իրարու նման ին։ Կըսե թե. «Իդա ծիան պետք է ճոկիք իրարուց. տեսնաք մամ ո՞ր մեկն է, կամ թը էրկու տարեկան քուռակ, կամ մեկ տարեկան ու ընձի ճամփեք»։

Իդոտկուն լէ թագավորի վազիրներ կքոմին չկրնան հանին։ Ախչիկ կլսե ու տղին կպատմե, տղեն լէ կըսե.

— Թրխ էրթան էն ծիան ճրի վրեն քաշին, որ մեկ օր վիզն էրկնցուց ու ճուր խմեց, էնի մամն է. էն մեկ լէ օր մեկ ոտ ճրի մեջ թալեց ու ճուր խմեց, էն լէ էրկու տարեկան է, ըմեկել օր թը էկավ ճրի պռուկ ու թռավ ճրի մեջ ճուր խմեց՝ էն լէ մեկ տարեկան քուռակն է. թրխ հրմալ նշնին ղծիան ու ճամփին էրթա։

Իդոտկուն գիգան թագավորին կըսին, թագավորն լէ էդմալ կէնե, ու դիմնա թը մամն որ մեկն է, ճոչ քուռակ ո՞ր մեկն է, ու պզտիկ որ մեկն է, նշնեց ու ճամփեց։

Իդոտկուն էն մյուս թագավոր ախթվավ ախչկա պապուց։

Քենիմ օր սորա, ախչկա ջառիեք գիմնան թը ախչիկ էրկու ֆոգովցեր է, կվախենան ու իրարու կըսին. «էրթանք շուտով հ՚առեճ թագավորին խաբար տանք, չէղնի ետի անգամ մըզի վնասե»։

Ջառեք կէրթան ու թագավորին խաբար դիտան. «Քու ախչիկ էրկու ֆոգովցեր է»։

Թագավոր գողտուկ կխանչե ուր ախչիկ, կըսե.— Ախչի, ըդի դու վի՞րնից իս մացե էրկու ֆուգով, արի զդողրուսին ընձիկ ըսե, թե չէ՝ քու վիզ կղարկիմ։

Ախչիկ կըսե.— Էդ թագավոր օր էդ բաներ ճամփեց, չէ թը ես ու դուն հանեցինք, հանեց էն մարթ օր ես ուրին հետ նստեր եմ ու կաներ եմ, ընդրնե լէ էրկու ֆոգովցեր իմ, կուզիս գլուխս զարկ, կուզիս մի զարկի։

Իդ անգամին թագավոր կուրախնա, ու կըսե.— Գնա, զէդ մարթ հանե առ արե։

Թագավոր զտղեն օր կտեսնա, տղեն խորոտ կէղնի, կուրախնա, կխնդա կբերե զախչիկ կփսակե վըր էդ տղին։

Յոթն օր, յոթ գիշեր կուտին կխմին, ուրախութեն կէնին։

Գելնա զուր փեսեն կճամփե մյուս թագավորին մոտ շատ

զորքով։ Փեսեն կէրթա, կառնին զախչիկ ու գիգան էն լէ էմալ կփսակե վրը փեսին։

Յոթն օր, յոթ գիշեր դհոլ զուռնա կզարկին, ուրախութեն կէնին։

Տզի հ՚առճի կնիկ կպառկի տղե մե կէղնի։ Մեկ տարի կմնա, տղեն կրետնա։

Իրիկուն կէղնի, կպառկին տեխին մեջ, մեկ կնիկ մեկ կուշտ, մեկել լէ՝ մեկել կուշտ, տղեն լէ սրտի վրեն կխաղա։ Իրիկն կըսեկնկտոց թե.

— Ես էրազ մը տեսեր իմ։

Կնկտիկ կվերցուն ու կըսին թը. «Աստված խերն էնե քու էրազդ, մըզիկ պատմե»։ Տղեն էդ տեխ նորեն սկսեց ուր էրազ կնկտոց պատմել։

Ըսավ թը.— Ես տեսա թը էրկնուց իրենք աստղ իշավ, մեկ իմ աջ թևին, մեկ իմ ձախ թևին, մեկ լէ սրտիս վրեն կխաղեր։

Կնիկ լէ վերուց ըսեց.— Աստղ մե ես իմ, մեկ լէ մեկել կնիկ, մեկ լէ քու տղեն էր, օր քու սրտի վրեն կխաղա։

Ուրանք լավ ապրան, ուրանք հասան ուրանց մուրազին, մենք լէ հասնինք մեր մուրազին։

Հ՚երկնուց իրեք խնձոր պատավ, մեկ ըսողին, մեկ լսողին, մեկ լէ՝ գրողին։